ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » փետրվարի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-006-23.01.2019-ՄԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-006-23.01.2019-ՄԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագծի 1-ին հոդվածով քննարկվող գործող օրենքի 6-րդ հոդվածը թողնել անփոփոխ հետևյալ հիմնավորմամբ.

Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող կարգավորմանը համանման կարգավորում «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) արդեն իսկ առկա է: Մասնավորապես, համաձայն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ պարբերության, արհեստակցական կազմակերպության մասնակիցներ (անդամներ) կարող են լինել նաև տնտեսության (արտադրության, ծառայության, մասնագիտության) համապատասխան ճյուղում (հարակից ճյուղերում) տարբեր գործատուների հետ աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողները:

Այսինքն, օրենքի գործող դրույթը ներկա պահին էլ տարբեր գործատուների հետ աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողներին հնարավորություն է տալիս ստեղծել անկախ արհմիություն, որը որևէ կերպ կախված չէ այս կամ այն գործատուից (այն կարևորվում է նաև նախագծի հիմնավորման մեջ): Այս պարագայում, օրենքի գործող դրույթը, որպես տարբեր գործատուների հետ աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողներին միևնույն արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) դառնալու անհրաժեշտ պայման, սահմանում է միայն տնտեսության (արտադրության, ծառայության, մասնագիտության) համապատասխան ճյուղում (հարակից ճյուղերում) աշխատելը:

Մինչդեռ, նախագծի ընդունման պարագայում կստացվի, որ ոչ միայն համապա-տասխան ճյուղի (հարակից ճյուղերի) տարբեր գործատուների հետ աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողները կկարողանան միավորվել և ստեղծել արհեստակցական

կազմակերպություն, այլև՝ տարբեր ճյուղերի տարբեր գործատուների հետ աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողները:

Այս առումով հարկ է նկատել, որ տնտեսության տարբեր ճյուղերում աշխատողներն ունեն մասնագիտական և աշխատանքային տարբեր առանձնահատկություններ: Հետևաբար տնտեսության տարբեր ճյուղերի գործատուների մոտ տարբեր մասնագիտություններ ունեցող աշխատողների՝ մեկ արհեստակցական կազմակերպությունում միավորումը կարող է հանգեցնել այդ արհմիության անդամների շահերի բախման՝ չնպաստելով աշխատողների իրավունքների և շահերի արդյունավետ պաշտպանությանը (օրինակ, առողջապահության, սպասարկման, թեթև արդյունաբերության, հանքարդյունաբերության ոլորտներում աշխատողների միավորումը մեկ արհեստակցական կազմակերպությունում, այն պարագայում, երբ յուրաքանչյուր ոլորտում աշխատողների համար սահմանված են աշխատաժամանակի, հանգստի ռեժիմների, առողջության պահպանման և անվտանգության ապահովման կանոնների, արձակուրդների տևողության և այլնի մասով միմյանցից տարբերվող կարգավորումներ):

Միաժամանակ հարկ ենք համարում նշել նաև, որ նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող կարգավորումը, ըստ էության, կարող է հանգեցնել նաև ճյուղային արհեստակցական միությունների դերի ու նշանակության թուլացման՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նախագծի ընդունման պարագայում, անկախ այն հանգամանքից, թե որ ճյուղում գործունեություն իրականացնող գործատուի աշխատողներ են, վերջիններս կարող են միավորվել և ստեղծել արհեստակցական միություն:

Հարկ ենք համարում նաև տեղեկացնել, որ նախագիծը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության սոցիալական գործընկեր Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի (այսուհետ՝ ՀԱՄԿ) կարծիքին: Վերջինս գրությամբ տեղեկացրել է, որ նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող կարգավորումն իրենց կողմից ընդունելի չէ: Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող կարգավորման ոչ ընդունելի լինելու վերաբերյալ առանձին գրություններով իրենց կարծիքն են ներկայացրել ՀԱՄԿ-ի կազմում գտնվող

երկու ճյուղային միությունները ևս (Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը և Հայաստանի կոմունալ-բնակարանային տնտեսության և ծառայությունների ոլորտի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը)։ Նշված կարծիքները կցվում են։

Ամփոփելով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ օրենքի գործող դրույթը արհեստակցական կազմակերպության գործունեության նպատակը և աշխատողների իրավունքներն ու շահերը ներկայացնելու տեսանկյունից սահմանում է առավել արդյունավետ և համակարգային կարգավորում։

Միաժամանակ հայտնում ենք, որ՝

1) նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառն անհրաժեշտ է փոխարինել «ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառերով, քանի որ նախագծով նախատեսվում է կատարել լրացում և փոփոխություն,

2) նախագծի 1-ին հոդվածում «պարբերությունից» և «պարբերությունով» բառերն անհրաժեշտ է համապատասխանաբար փոխարինել «մասից» և «3-րդ մասով» բառերով՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 փետրվարի 2019 թվականի N 172 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Արման Ուդումյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-006-23.01.2019-ՄԻ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. փետրվարի 26
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-006-23.01.2019-ՄԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արհեստակցական միությունների մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-135 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերությունով.

«Արհեստակցական կազմակերպության մասնակիցներ (անդամներ) կարող են լինել նաեւ տնտեսության տարբեր ճյուղերում միեւնույն կամ տարբեր գործունեություն իրականացնող գործատուների հետ աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողները:»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածի «բողոքարկել նրանց գործողությունները (անգործությունը)» բառերը փոխարինել «նրանց որոշումների, գործողությունների կամ անգործության իրավաչափությունը վիճարկելու պահանջով դիմել դատարան» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ արհեստակցական կազմակերպությունը հիմնադրվում է նրա հիմնադիրների (առնվազն երեք աշխատողի) նախաձեռնությամբ հրավիրված հիմնադիր ժողովի (համաժողովի, համագումարի) որոշմամբ: Որպես կանոն, արհեստակցական միությունները ստեղծվում են տվյալ գործատուի մոտ աշխատող անձանց կողմից: Որպես արհմիության անդամ, բայց նաեւ որպես գործատուի աշխատող, արհեստակցական միության ընտրովի պաշտոններում ընդգրկված անձինք, փաստորեն, կաշկանդված են լինում գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների փաստով: Այսինքն՝ արհմիության լիազորված ներկայացուցիչները, լինելով գործատուի աշխատողներ, օգտվելով գործատուի գույքից, նրա կապի եւ տրանսպորտի միջոցներից, չեն կարողանում իրենց՝ որպես արհմիության անդամի լիազորությունները անկախ եւ օբյեկտիվ իրականացնել: Բացի այդ, տեղական մակարդակում գործող արհմիությունների բյուջեն համալրվում է գլխավորապես գործատուի կողմից արվող հատկացումներով, ինչն արհմիությանն անվիճելիորեն կախվածության մեջ է դնում գործատուից:

Փորձը ցույց է տալիս, որ գործատուի մոտ գործող արհմիությունները գրեթե միշտ ձեռնպահ են մնում աշխատողների շահերի պաշտպանության համար դատարան դիմելուց, եւ աշխատողների շահերի պաշտպանությունը լավագույն դեպքում սահմանափակվում է խորհրդատվական, զուտ մասնագիտական բնույթի գնահատականների փոխանակության մակարդակում:

Նախագծով առաջարկվում է սահմանել անկախ արհմիություն ստեղծելու եւ դրան անդամակցելու հնարավորություն, ինչը հասանելի լինի տարբեր գործատուների մոտ աշխատող ամենատարբեր մասնագիտություններ ունեցողների համար, եթե արհեստակցական միություններին անդամակցելը տվյալ կատեգորիայի աշխատողների համար արգելված չէ օրենքով: Այդպիսով անկախ արհեստակցական կազմակերպությունը կախվածություն չի ունենում որեւէ գործատուից եւ ֆինանսավորվում է բացառապես աշխատողների անդամավճարներով եւ օրենքով չարգելված ցանկացած այլ աղբյուրից, բայց ոչ գործատուի միջոցներից, ինչը լիարժեք ու ինքնուրույն գործելու ողջամիտ հեռանկար է ստեղծում արհեստակցական միության համար:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունմամբ ակնկալվող արդյունքը՝

- ապահովվում է աշխատողներին միավորող արհեստակցական միության լիարժեք անկախությունը.
- բարձրանում է աշխատողներին միավորող արհեստակցական միության նկատմամբ վստահությունը.
- ընդլայնվում են աշխատողների խախտված կամ վիճարկվող իրավունքների հասարակական պաշտպանության շրջանակները եւ էապես թեթեւանում է նրանց աշխատանքային իրավունքների դատական պաշտպանության հետ կապված բեռը (նկատի ունենք, որ շրջանցվում է փաստաբանների վճարովի ծառայություններից օգտվելու անհրաժեշտությունը).